Հավելված
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2023 թվականի մարտի 1-ի №60-Ն որոշման

Հավելված N 4
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2019 թվականի դեկտեմբերի 25-ի
N 523-Ն որոշմամբ հաստատված
Հայաստանի Հանրապետության
էլեկտրաէներգետիկական շուկայի
բաշխման ցանցային կանոնների

ՍՊԱՌՈՂԻ ՄԻԱՑՄԱՆ ՎՃԱՐՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. 0.4 (0.22) կՎ լարմամբ միացող առանձնատների և Առևտրային սպառողների ստանդարտ միացման վճարները

1. 0.22 կՎ լարմամբ միացվող առանձնատների և Առևտրային սպառողների ստանդարտ միացման վճարները որոշվում են համաձայն հետևյալ աղյուսակի.

Աղյուսակ N 1

Միացման տեսակը	**Միացվող առավելագույն հզորությունը**	**Ստանդարտ միացման վճարը** հազար դրամ (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը)	
		Երևան քաղաքի տարածք	**Հայաստանի Հանրապետության տարածք (բացառությամբ Երևան քաղաքի)**
Միաֆազ (0.22 կՎ)	10 կՎԱ	282	234
	14 կՎԱ	305	239

Միացման ուժեղացում	10կՎԱ-ից 14 կՎԱ	23	5

2. 0.4 կՎ լարմամբ միացվող առանձնատների և առևտրային սպառողների սպառման համակարգերի ստանդարտ միացման վճարները (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը) որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$Վ_{ստ} = Վ_{հ} + Վ_{փ} * Պ_{հզ}$$

որտեղ՝

1) **Վ**$_{հ}$-ն հաստատուն ծախսերի մեծությունն է, որն ընդունվում է հավասար 305 000 (երեք հարյուր հինգ հազար) դրամի,
2) **Վ**$_{փ}$-ն փոփոխական ծախսերի մեծությունն է, որը յուրաքանչյուր կՎԱ-ի համար Երևան քաղաքի տարածքում ընդունվում է հավասար 46 000 (քառասունվեց հազար) դրամի, իսկ Հայաստանի Հանրապետության այլ տարածքներում՝ 20 000 (քսան հազար) դրամի,
3) **Պ**$_{հզ}$-ն Հայտատուի կողմից պահանջվող հզորությունն է (կՎԱ):

ԳԼՈՒԽ 2. Բազմաբնակարան շենքի բնակարանների և Առևտրային սպառողների միացման վճարները

3. Բազմաբնակարան շենքերի բնակարանների և առևտրային սպառողների միացման վճարները միաֆազ միացման դեպքում որոշվում են համաձայն հետևյալ աղյուսակի.

Աղյուսակ N 2

Միաֆազ միացմամբ բնակարանների և առևտրային սպառողների քանակը	Մեկ բնակարանի կամ առևտրային սպառողի միացման վճարը միաֆազ միացման դեպքում, հազար դրամ (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը)	
	10 կՎԱ հզորություն	14 կՎԱ հզորություն
	693	790

4. Բազմաբնակարան շենքերի բնակարանների և առևտրային սպառողների միացման վճարները 0.4 կՎ լարմամբ միացման դեպքում (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը) որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$Վ_3 = Վ_հ + Վ_փ * Պ_{հզ}$$

որտեղ՝

1) $Վ_հ$-ն հաստատուն ծախսերի մեծությունն է, որն ընդունվում է հավասար 305 000 (երեք հարյուր հինգ հազար) դրամի,
2) $Վ_փ$-ն փոփոխական ծախսերի մեծությունն է, որը յուրաքանչյուր կՎԱ-ի համար ընդունվում է հավասար 89 000 (ութսունինը հազար) դրամի,
3) $Պ_{հզ}$-ն Հայտատուի կողմից պահանջվող հզորությունն է (կՎԱ):

ԳԼՈՒԽ 3. 6 (10) կՎ լարմամբ միացող Առևտրային սպառողների ստանդարտ միացման վճարները

5. 6 (10) կՎ լարմամբ միացվող սպառողների սպառման համակարգերի ստանդարտ միացման վճարները (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը) որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$Վ_{ստ} = Վ_հ + Վ_փ * Պ_{հզ}$$

որտեղ՝

1) **Վ**$_{հ}$-ն հաստատուն ծախսերի մեծությունն է, որը Երևան քաղաքի տարածքում ընդունվում է հավասար 2 269 000 (երկու միլիոն երկու հարյուր վաթսունինը հազար) դրամի, իսկ Հայաստանի Հանրապետության այլ տարածքներում՝ 1 002 000 (մեկ միլիոն երկու հազար) դրամի դրամի,
2) **Վ**$_{փ}$-ն փոփոխական ծախսերի մեծությունն է, որը յուրաքանչյուր կՎԱ-ի համար Երևան քաղաքի տարածքում ընդունվում է հավասար 13 000 (տասներեք հազար) դրամի, իսկ Հայաստանի Հանրապետության այլ տարածքներում՝ 9 000 (ինը հազար) դրամի,
3) **Պ**$_{հզ}$-ն Հայտատուի կողմից պահանջվող հզորությունն է (կՎԱ)։»։